

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի

Ընկալեալ մեր զհրաժարական Տ. Մատթէոս վարդապետի ի պաշտամանէ խմբագրութեան «Արարատ» պաշտօնական ամսագրի Մայր Աթոռոյս՝ այսու հայրապետական կոնդակաւ մերով հաստատեմք զգերաշնորհութիւն Ձեր խմբագիր նոյն ամսագրի ըստ ընտրութեան միաբանական ժողովոյ։

Լիայոյս եմք, եթէ դուք փութաջանութեամբ Ձերով և բազմամեայ գրական հմտութեամբ ունիք սրտեռանդն ոգւով և ընտիր և օգտակար յօդուածովք զարդարել զէջս

պաշտօնական ամսագրի Մայր Աթոռոյս և անխաթար կարգաւ և ուղղութեամբ յառաջ վարել զգրական գործդ յօգուտ ազգիս և ի փառս Մայր Աթոռոյս և 'ի միխիթարութիւն Ձեր և Մեր։

Արդ՝ յայտնելով նախորդի Ձերում Տ. Մատթէոս վարդապետի զգոհանակութիւն Մեր հանդերձ հայրապետական օրհնութեամբ յաղագս անթերի կատարման պարտուցն ի պաշտաման խմբագրի «Արարատ» ամսագրի, մաղթեմք Ձեզ կար, զօրութիւն և կորով մտաց ի գրական աստպարիզիդ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

31 Հոկտեմբերի 1909 ամի
և ըստ Տումարին մերում ՌՃԾԹ
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 323։

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Բարձրապատիւ Տ. Իսահակ վարդապետի Տէր-Միքայէլեան հարազատի Մայր-Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Ընկալեալ Մեր զհրաժարական Տ. Երուանդ վարդապետի ի պաշտամանէ տեսչի տպարանի Մայր Աթոռոյ, այսու Հայրապետական կոնդակաւ մերով հաստատեմք զԲարձրապատուութիւն Ձեր ի պաշտման տեսչի նոյն տպարանի՝ ըստ ընտրութեան միաբանական ժողովոյ։

Լիայոյս եմք, եթէ դուք բազմամեայ փորձառութեամբ Ձերով և հմտութեամբն, զոր ունիք վարմամբ պաշտաման անդամութեան վարչութեան տպարանի յաւուրս Նախորդին մերոյ, անձնուէր ոգւով և նովին եռանդեամբ գուն գործեսջիք զեկավարել զգործս տպարանին և անսայթաք յառաջ մղել զհաստատութիւնդ ի բարգաւաճումն և ի յառաջադիմութիւն։

Արդ՝ պատուիրեմք Ձեզ ըստ պատշաճ ստացողական և յանձնողական ցուցակի ընդունել ի Տ. Երուանդ վարդապետէ զամենայն հաշիւս, զդրեան, զթղթեան և զայլս ամենայն, որ ի տպարանի, և զմի օրինակ ցուցակին մատուցանել Մեզ։

Յայտնելով զլիաշուրթն գոհունակութիւն Մեր հանդերձ հայրական օրհնութեամբ նախորդի Ձերում Տ. Երուանդ վարդապետի յաղագս անթերի կատարման պարտուցն, եդելոց ի վերայ նորին, մաղթեմք Ձեզ կար և զօրութիւն յաջողութեամբ վարելոյ զնոր պաշտօնդ յոգուտ Մայր Աթոռոյս։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

«31» Հոկտեմբերի 1909 ամի
և ըստ տոմարիս ՌՅԾԹ.
Ի Հայրապետութեան մերում Ա. ամի
Աբարատեան Մայր-Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 325.

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ.....

Բարձրապատիւ Տ. Յուսիկ վարդապետի հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Զկնի համբառնալոյ մերոյ ի գահ Հայրապետական հասու եղաք, եթէ յաւուրս հայրապետութեան Նախորդի մերոյ Բաձրապատուութիւն Ձեր ամս բազումս պաշտամամբ Դիւանապետի վարեալ է զգործս Հայրապետական Դիւանի, որով և քաջապէս հմտացեալ եղանակի գործավարութեան և վարման ծանուս պաշտամանդ։

Արդ՝ ի նկատ առեալ Մեր զբազմամեայ փորձառութիւն Ձեր ի պաշտաման Դիւանապետի, կամ եղև Մեզ սովին Հայրապետական կոնդակաւ Մերով կոչել զՁեզ ի

պաշտօն Դիւանապետի Դիւանատան Մերոյ, պատուէր հրամանի տալով Բարձրագոյն Դատարանի Ձերում աչալուրջ հսկողութեամբ և փութաջան եռանդեամբ յառաջ վարել զպարտիս պաշտամանդ ըստ ժամանակաւոր հրահանգաց Հայրապետական Դիւանին տուելոյ ի Մէնջ, կանխաւ խորհելով համահաճ տեսութեամբ ընդ Դիւանական խորհրդոյ, կարգելոյն ի Մէնջ ի Տ. Տ. Մեսրոպայ վարդապետէ Տ. Մովսէսեան, Գարեգնէ վարդապետէ Յովսէփեան և ի Թորենայ վարդապետէ Մուրադբէկեան։

Լիայոյս եմք, եթէ սրտեռանդն ջանիք և անդուլ վաստակօք ունիք արդարացուցանել զակնկալութիւն Մեր, անսայթաք յառաջ վարելով զպաշտօնդ ընդ պատասխանատուութեամբ Ձերով։

Ողջ լերուք, զօրացեալ ի խնամս երկնաւոր Հօր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն,

Ի 24 Սեպտ. 1909 ամի
Թ. 2.

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ առաջնորդի թեմին Հ. Վրաստանի Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի հարազատի Մ. Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական:

Յօրէ ամբառնալոյ Մեր ի գահ Հայրապետական նկատեմք, զի մերազգի ժողովրդականք բազմաթիւ խնդրովք դիմեն առ Մեզ և դարման հայցեն այնոցունց, է որ վասն թոյլտուութեան պսակաց, է որ վասն ամուսնալուծութեանց, շնորհման վերստին իրաւանց ամուսնութեան, յորմէ զրկեալ են լուծմամբ պսակացն, ձեռնադրութեան ընծայացուցց ի քահանայ, բողոքց զհոգևորականաց և այլոց բազմազան առարկայից և խնդրոյ, եւ վասն ստուգութեան հանգամանաց խնդրոյս առ տեղեաւն՝ հարկեալ դատնիմք վերադարձուցանել զխնդիրս առ թեմական առաջնորդս կամ ի կոնսիստորիայս առ ի վերստին մատուցանել զայնոսիկ

Մեզ հանդերձ քաղեալ տեղեկութեամբ և եզրակացութեամբ իւրեանց։ Վասնորոյ ի հանդէս գան վարկպարագի գրագրութիւնք ընդ երկար ի վնաս շուտափոյթ կատարման խնդրոց և ժամավաճառումն պաշտօնէից և հաստատութեանց մերոց։

Արդ՝ առ ի զառաջս առնուլ այսօրինակ անպատեհութեանց և անտեղի գրագրութեանց, այսու կոնդակաւ մերով պատուիրեմք Գերաշնորհութեան Ձերում առնել շրջաբերական կարգադրութիւն և ի ձեռն ստորագրեալ Ձեզ հոգևոր պաշտօնէից, հաստատութեանց և համօրէն քահանայից ծանուցանել համայն մերազնեայ ժողովրդեան թեմիդ, եթէ խնդրատուք պարտին դիմել առ Մեզ ի ձեռն մերձաւոր հոգևոր հաստատութեանց և պաշտօնէից կամ առաջնորդին, զի հնարաւոր լիցի նոցա զխնդիրսն ժողովեալ կարևոր տեղեկութեամբք և եզրակացութեամբ իւրեանց մատուցանել Մեզ ի վախճանական տնօրէնութիւն։

Ի 5 հոկտ. 1909 ամի
Թ. 105.

Ըստ այսմ

Թ. 106 Առաջնորդին Բեսարաբիոյ.
Թ. 107 » Շամախւոյ.
Թ. 108 » Ղարաբաղի.
Թ. 109 Ժամ. կառավ. թեմ. Աստրախանի
Թ. 110 Կոնսիստորիային Երևանայ.

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռի նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Քաջայայտ է ամենեցուն, ազգի ազգի հնութիւնք և ձեռագիր մատեանք յեկեղեցիս և ի վանօրայս մեր մատնին անուշադրութեան և ընդ երկար մնալով անխնամ ի փոշիս և ի խոնաւ անկիւնս՝ եղծանին և ոչնչանան։

Արդ՝ վասն ազատ պահելոյ ի կորստենէ զհնութիւնս և զձեռագիր մատեանս այսու կոնդակաւ մերով պատուի-

բեմք Գերաշնորհութեան Ձերում տնօրինել ժողովել յաժենայն Ծխական եկեղեցեաց և ի վանօրէից թեմիդ զհնութիւնս և զձեռնագիր մատեանս, բաց յայնոցունց, որք համարին սրբութիւն, արձանագրել զանուն մէն մի եկեղեցւոյ և վանուց, որոյ սեպհականութիւն համարի իւրաքանչիւր հնութիւն կամ ձեռագիր մատեան, և առաքել զայնս յանուն Մեր ի պահել յապահով վիճակի ի մատենադարանի և ի թանգարանի Մայր Աթոռոյս յանուն վանաց կամ եկեղեցւոյն, որոց սեպհականութիւն են այնոքիկ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

21 հոկտ. 1909 ամի
Թ. 218.

Ըստ այսմ.

Առաջնորդի թեմին	Բեսսարաբիոյ	Թ. 232,
» »	Շամախւոյ	Թ. 234,
» »	Ղարաբաղի	Թ. 236,
ժամ. կառավարչի »	Աստրախանի	Թ. 240,
Նախագահողի կոնիստ.	Երևանայ	Թ. 218,
Առաջնորդի թեմին	Ատրպատականի	Թ. 237,

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ առաջնորդի թեմին Հայոց վրաստանի Տ. Դարեգին արքեպիսկոպոսի հարազատ Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Այսու Կոնդակաւ մերով պատուիրեմք Գերաշնորհութեան Ձերում քաղել և ընդ փոյթ առաջի առնել Մեզ զհետագայ տեղեկութիւնս՝ ա. զյուցակ ողջոյն կրօնուսուցչաց թեմական դպրանոցի, եկեղ. Ծխական երկսեռ դպրոցաց Հայոց և Պետական ամենազգի ուսումնարանաց համայն թեմիդ. Բ. եթէ իւրաքանչիւր կրօնուսույց ի քանի՞ դպրոցս և զո՞րչափ ժամս աւանդէ զդասս կրօնի. Դ. մատուցանել զվկայականս (ցենզ), որով արտօնեալ են մէն մի կրօնուսուցչի աւանդել զդասս կրօնի հայոց, և Դ. կազմել զցանկ դասագրոց, զորս ի կեր արկանեն վասն դա-

տուց կրօնի, և զմի մի օրինակ ի դասագրոցն մատուցանել Մեզ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

Ի 4 Նոյեմբ. 1909 ամի

Թ. 358

Ըստ այսմ.

Առաջնորդին Նոր–Նախիջևանի և Բեսարաբիոյ Թ. 369.
» Շամախւոյ Թ. 360.
» Ղարաբաղի Թ. 361
Ժամ. կառավ. Թեմին Աստրախանի Թ. 662
Նախ. կոնստ. Երևանայ Թ. 363

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի Տ. Գարեգին արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռոյս Նուիրեմբ ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Ի գործոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի և յայլոց աղբերց հասու լինիմք, եթէ ի տեղիս տեղիս թեմիդ ի մասնաւոր տունս կամ ի բնակարանս անհատից գտանին սուրբ աւետարանք կամ այլ սրբութիւնք և ի վայրսդ բարեպաշտօն ժողովրդականք Մեր գնան յուխտ և յերկպագութիւն սրբութեանցն, արդիւնք որոց և մնան յօգուտ տանուտեարն։

Ի նկատ առեալ Մեր, զի ամենայն սրբութիւն պարտի լինել ի տաճարի Տեառն և ոչ ի բնակավայրս մարդկան ի նսեմութիւն և յարհամարհանս սրբութեանն, զոր չէ վայել ունել արտաքոյ և օգտիլ արդեամբն, ուստի և այսու Կոնդակաւ Մերով պատուիրեմք Գերաշնորհութեանն Ձերում տնօրինել ստուգել, եթէ ուրուրեք ի թեմիդ գոն սրբութիւնք ի մասնաւոր տունս և անյապաղ դնել զայնս յեկեղեցւոջ գեղջն և զգոյացեալ արդիւնս ուխտից այնոցունց յատկացուցանել նոյն եկեղեցւոյ, որով և արգելուլ իսպառ զպանարակելի սովորութիւնն ունելոյ ի մասնաւոր տունս զս և է սրբութիւն։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի մէնջ։ Ամէն։

Ի 11 Նոյեմբ. 1909 ամի
Թ 406

Ըստ այսմ

Առաջնորդի թեմին	Բեսարաբիոյ	Թ. 407.
» »	Շամախւոյ	Թ. 408.
» »	Ղարաբաղի	Թ. 409.
Ժամ. կառավ. թեմին	Աստրախանի	Թ. 410.
Նախ. կոնսիստ.	Երևանայ	Թ. 411.

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ....

Գերաշնորհ առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի հարազատի Մ. Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Ի լրումն ժամանակաւոր հրահանգաց, տուելոց ըստ պատուէրի մերում առաջադրութեամբ և ընդ ստորագրութեամբ Տ. Տեղակալի Հայրապետութեան ամենայն Հայոց ի 26 օգոստ. տարւոյս Թ. 325, վասն ծխական դպրոցաց թեմիդ, ընդ կոնդակիս ընդ այսմիկ առաքեմք ի կիրառութիւն զվաւերացուցեալ պատճէն ժամանակաւոր կանոնաց վասն կառավարութեան վանական կալուածոց, որ կազմեալ է յեօթնից յօդուածոց։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

Ի 21 հոկտ. 1909 ամի
Թ. 225.

Ըստ այսմ

Առաջնորդի թեմին	Բեսարաբիոյ	Թ. 231,
» »	Շամախւոյ	Թ. 233.
» »	Ղարաբաղի	Թ. 235.
Ժաման. կառ. թեմին	Աստրախանի	Թ. 239.
Նախագահողի կոնսիստ.	Երևանայ	Թ. 217.

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Վանական կալուածների կառավարութեան համար

1. 1905 թ. օգոստ. 1-ի Ժամանակաւոր Կանոնների (Մասն III. յօդ. 2) տրամադրութեան համաձայն վանական կալուածների կառավարութեան համար կազմուում են թեմական խորհուրդներ առաջնորդի նախագահութեամբ չորս անդամներից և երկու անձնափոխանորդից բաղկացած։

2. Թեմական խորհրդի անդամները ընտրուում են և հաստատուում են թեմական դպրոցների հոգաբարձութեան համար սահմանուած կարգով (Ժ. Կ. Մ. II. յօդ. 2, 3)։

3. Խորհուրդը իւրաքանչիւր տարի կազմում է կալուածների ել և մտի նախահաշիւ և առաջարկում է Սինոդին։

4. Թեմական խորհրդի գործունէութիւնն ու հաշիւները քննելու համար ընտրուում է վերստուգիչ յանձնաժողով։

5. Թեմական խորհուրդները իւրաքանչիւրն իւր թեմի համար ըստ կայքերի և տեղական պայմանների ուրոյնութեան հրահանգներ է սահմանում վանքապատկան կայքերի կառավարութեան համար և ներկայացնում ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

6. Թեմական խորհրդի տարեկան հաշիւները և վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումն քննուում և ստուգուում են թեմական պատգամաւորական ժողովում և առաջնորդի միջոցաւ ներկայացուում են Սինոդին։

7. Վանքապատկան կալուածների կառավարութեան վերաբերեալ ընդհանուր հարցերը քննելու և կարգադրելու համար Վեհափառ Կաթուղիկոսը պարբերաբար Ս. Էջմիածնում թեմական խորհուրդների, Սինոդի և Մայր Աթոռի միաբանութեան ներկայացուցիչներից խորհրդակցութիւն է հրաւիրում։